ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 153-Ա

<<28>> նոյեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ ԱՆԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 1 ՇԵՆՔԻ 6 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՍՈՍԻԱ ՄԻՍԱԿԻ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի 2-րդ թաղամասի, 1-ին շենքի 6 բնակարանը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում տվյալ բնակարանի բնակչի կողմից չի սեփականաշնորհվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ հաստատված N 7 հավելվածով պետական բնակելի ֆոնդը և պետական ոչ բնակելի տարածքները սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 17/11/2023թ. N ԱՏ-17112023-08-1159 տեղեկանքը՝ համայնք Անի, Մարալիկ քաղաք 2-րդ թաղամաս 1 շենք, բնակարան 6 հասցեով անշարժ գույքի էլեկտրոնային կադաստրային գործում հիմք հանդիսացող փաստաթղթերի բացակայության մասին, <<Հայաստանի ազգային արխիվ>> պետական ոչ առևտրային կազմակերպության Մարալիկի տարածքային ներկայացուցչության 10.06.2024 թ N Մր-184 արխիվային տեղեկանքը՝ Անիի շրջխորհրդի գործկոմի 1987 թվականի մարտի 5-ի թիվ 4 արձանագրության որոշման համաձայն Մարալիկ քաղաքի թիվ 2 բնակելի թաղամասի թիվ 1 շենքի, թիվ 6 երեք սենյականոց բնակարանը Սոսիա Միսակի Քոչարյանի 4 անձից բաղկացած ընտանիքին հատկացնելու մասին, հաշվի առնելով քաղաքացի Սոսիա Միսակի Քոչարյանի 2024 թվականի հունիսի 25-ի դիմումը.

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող մարզ Շիրակ, համայնք Անի, Մարալիկ քաղաք, 2-րդ թաղամաս 1 շենքի 6 հասցեի 75.01 քառակուսի մետր մակերեսով երեք սենյականոց բնակարանը /կադաստրային ծածկագիր՝ 08-003-0026-0060-011-006, Վկայական՝ N 30102024-08-0046/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով նվիրել տվյալ բնակարանում փաստացի բնակվող և հաշվառված քաղաքացի Սոսիա Միսակի Քոչարյանի /անձնագիր՝ AL0382649, տրված՝ 10.08.2023թ. 022-ի կողմից, հետագայում ՝ Նվիրառու/ 2 անձից բաղկացած ընտանիքին:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված բնակարանի նկատմամբ համասեփականատեր ճանաչել Սոսիա Միսակի Քոչարյանին /անձնագիր՝ AL0382649, տրված՝ 10.08.2023թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, համայնք Անի, Մարալիկ քաղաք, 2-րդ թաղամաս 1 շենքի 6 բնակարան/, աղջկան՝ Նարինե Սերյոժայի Քոչարյանին /անձնագիր՝ AL0384483, տրված՝ 12.08.2023թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, քաղաք Գյումրի, Այգաբաց 2 շարք, տուն 29/:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր.

բ) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Նվիրառուի միջոցներով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝ 11	**դեմ՝0**	**ձեռնպահ՝0**
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	_____	_____	_____
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	_____	_____	_____
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	_____	_____	_____
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	_____	_____	_____
Ա. ՇԱԲՈՅԱՆ	_____	_____	_____
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	_____	_____	_____
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	_____	_____	_____
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	_____	_____	_____
Ն. ՍԱՐՈՅԱՆ	_____	_____	_____

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ _____ _____ _____

Մ. ԱՍԼԱՆՅԱՆ _____ _____ _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<28>> նոյեմբերի 2024 թ.
քաղաք Մարալիկ